ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Ավանի մսուր-մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ի ***h.52, h.53, h.55, h.56 և h.57 մսուր - մանկապարտեզ հիմնարկների լոգոպեդների և h.55 մսուր-մանկապարտեզ հիմնարկում երաժշտության դաստիարակի*** թափուր հաստիքների համար՝ յուրաքանչյուրը մեկական դրույք:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում(Ձև1),մեկ լուսանկար 3x4 չափի,

-կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից կամ աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև4),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող թաստաթղթեր (առկայության դեպքում),

-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ: Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը ներկայացնել փաստաթղթերի ամբողջական փաթեթը :

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. հունիսի 25-ից մինչև հուլիսի 23-ը **ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. հուլիսի 24-ին՝ **ժամը 10:00-ին**, «Ավանի մսուր-մանկապարտեզներ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ք. Երևան, Խուդյակովի 222:

Տեղեկությունների համար զանգահարել 011518129 հեռախոսահամարով: